


# ՀԱՅԻ ԵՒ ՉՈՒՐԻ ՊԵՍ ...

*Posted on April 25, 2010 by Keghart*



Category: [Opinions](#)



Հեղինակ՝ Մինաս Գոճայեան, *Նոր Օր*, Լոս Անճելըս, 8 Ապրիլ 2010

### **Թափանցիկութիւն եւ Հաշուետուութիւն**

✘ Ժողովրդավարական-ռամկավարական հասարակութեան մը, միութեան մը, կազմակերպութեան մը չափորոշիչներէն են, ի թիւս այլոց, *թափանցիկութիւնն ու հաշուետուութիւնը* (transparency and accountability): Տարրաբանութեան լեզուով այս երկոմիասնութիւնը լիթմուս թուղթ մըն է (litmus paper): Երբոր կազմակերպութիւններէ ներս կը կադան կամ ձախող նիշ կը բերեն այս երկուքը, իմացեք որ անպայման տեղ մը բան մը սխալ կ'ընթանայ, ընթացք մը կայ, զոր տուեալ կազմակերպութիւնը կամայականութեան պատճառով կ'առաջնորդէ դեպի անդունդ՝ ուշ կամ կանուխ: Վատառողջ են այն կազմակերպութիւնները, որոնք կը խուսափին հաշուետուութենէ եւ թափանցիկութենէ:

Հեղինակ՝ Մինաս Գոճայեան, *Նոր Օր*, Լոս Անճելըս, 8 Ապրիլ 2010

### **Թափանցիկութիւն եւ Հաշուետուութիւն**

✘ Ժողովրդավարական-ռամկավարական հասարակութեան մը, միութեան մը, կազմակերպութեան մը չափորոշիչներէն են, ի թիւս այլոց, *թափանցիկութիւնն ու հաշուետուութիւնը* (transparency and accountability): Տարրաբանութեան լեզուով այս երկոմիասնութիւնը լիթմուս թուղթ մըն է (litmus paper): Երբոր կազմակերպութիւններէ ներս կը կադան կամ ձախող նիշ կը բերեն այս երկուքը, իմացեք որ անպայման տեղ մը բան մը սխալ կ'ընթանայ, ընթացք մը կայ, զոր տուեալ կազմակերպութիւնը կամայականութեան պատճառով կ'առաջնորդէ դեպի անդունդ՝ ուշ կամ կանուխ: Վատառողջ են այն կազմակերպութիւնները, որոնք կը խուսափին հաշուետուութենէ եւ թափանցիկութենէ:

Նման պարագաներուն անձ մը, կամ քանի մը անձեր ղեկավար դիրքերու վրայ, կը վերածուին իւրայատուկ մենատերներու եւ ինքնազլուխ ու ամբարտաւան բռնատերներու:

Այն կազմակերպութիւններն ու միութիւնները, ուր անդամները, հաւատալով իրենց Նախասիրութեանց համապատասխանող կազմակերպութիւններու հրատարակած գաղափարախօսութեան, ձայն կու տան կամ անդամավճար ու նուիրատուութիւններ կը կատարեն, իրաւունք ունին յստակ ու թափանցիկ հաշուետուութիւն պահանջելու: Այդպէ՞ս է արդեօք կացութիւնը հրապարակի վրայ գտնուող ոչ միայն երկրորդական, այլեւ տասնամեակներէ ի վեր գործող հաստատագրուած միութիւններու եւ կազմակերպութիւններու պարագան: Եթէ չինայենք մեր նշդրակներն ու սլաքները,

կարգ մը կազմակերպութիւններ չեն դիմանար ոչ իսկ մէկ օր եւ ամէն ինչ փոքր կու գայ Նիւ Եորքի գոյգ առեւտրական աշտարակներու նման, իրենց ակերակոյտերուն տակ թաղելով հարիւրաւորներ:

Երբ կը խօսինք ու կը պահանջենք մեր հասարակական կազմակերպութիւններէն, մարմիններէն ու յանձնախումբերէն, որպէսզի անոնք իրենք զիրենք օրէնքէ վեր չնկատեն ու դառնան հաշուետու եւ թափանցիկ՝ ժողովրդավարական ու արդար հասարակարգի ետեւէն բխած չափանիշ մըն է, զոր կը խնդրենք: Մենք չենք ուզեր, որ անոնք չարաշահեն մեր վստահութիւնը, միւս կողմէն ալ կը հասկնանք անշուշտ, թէ կազմակերպութիւնները որոշ իրաւունք մը ունին կարգ մը տեղեկութիւններ գաղտնի պահելու, եթէ վերջիններս կը սպառնան *ամբողջ կազմակերպութեան ու անդամութեան կենսական շահերուն*:

Նոր սերունդը, որուն բացարձակ մեծամասնութիւնը առնուազն երկրորդական եւ մասնագիտական կրթութիւն մը ձեռք բերած է, միշտ հարցումներ ունի ուղղելիք: Անոնք կ'ուզեն *պատճառը* գիտնալ եւ *համոզուիլ* առնուած քայլերուն եւ որոշումներուն ճշդութեան: Փորձուած է՝ երբ ղեկավարութիւնը չէ կրցած կամ չէ ուզած արդարացնել եւ կամ թաքցուցած է փաստերն ու տուեալները, բեկում մը յառաջացած է երկուքին միջեւ, իսկ այդ բեկումը առաջնորդած է դէպի օտարացում ու հեռացում:

Հարցեր կը պատահին ու խնդիրներ կը ծագին բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու մէջ. բնական է որ մարդիկ հաշիւ պահանջեն կամ բացատրութիւններ ուզեն: Պատասխանը յաճախ կ'ըլլայ միանշանակ. “ Մենք(°) պետք չունինք եւ պարտաւոր չենք հաշիւ տալու”: Ինչո՞ւ: Ժողովրդավարական հասարակարգի ո՞ր սահմանադրութեան մէջ ըսուած է ատիկա:

Կուսակցական ղեկավարութեան, հոգաբարձական մարմիններու, յանձնախումբերու եւ առհասարակ պաշտօնի վրայ յայտնուած անձերու մէջ նկատելի է վախճանի սկիզբը հանդիսացող անհարցաքննելիութեան մեծամտութիւնն ու բարդոյթը: Դժբախտաբար կացութիւնը այս հարթակին կը հասնի երբ այդ անձերը ընտրովի չեն, այսինքն իրենց աթոռին չեն հասած անդամակցութեան կամ լայն զանգուածին մասնակցութեամբ, այլ նշանակուած են...աւելի բարձր դիրքերու վրայ գտնուող այլ նշանակուած աթոռակալներու կողմէ: Ի՞նչ *տեմորրասիի* մասին կրնայ խօսք ըլլալ, երբ *առանց քննարկման նշանակումները* դեր կը խաղան եւ ոչ թէ ժողովուրդին կամ անդամակցութեան ձայնը:

Մեր հայ հասարակութեան մէջ նկատելի է (արդէն վաղուց) նաեւ “ցկեանս”ներու պարագաները: Խօսքը չի վերաբերիր անշուշտ “ցկեանս նախագահներու”, որոնք շահուած արդար տիտղոսներ են, այլ կը վերաբերին ճակատագիր որոշող, քաղաքականութիւն ու ռազմավարութիւն գծող “վերին արտի ցորեններուն” Ո՞վ կամ որո՞նք որոշեցին այդ “ցկեանս”ները, ի՞նչ հիման վրայ, ժողովրդավարական ո՞ր

սկզբունքներու վրայ – մի՛ հարցնէք – պատասխանն է՝ “ՄԵ՛ՆՔ”:

Հապա եթէ “երկուան մանուկը” հարցնէ. “ՉԷի՞ք ըսեր թէ ո՞վ էք դուք...”

Առանձնաշնորհեալներ կը նկատեն ինքզինքնին մարդիկ, որոնք մեծամտաբար կը հաւատան թէ իրենք շահած են կամ վաստակած են այդ: Այդպիսիներուն մենք կը յիշեցնենք 20-րդ դարու ռազմական ու քաղաքական մեծագոյն դէմքերէն Տուայթ Այզընհաուզըրի խօսքը.

-“Ժողովուրդ մը, որ աւելի բարձր արժէք կու տայ իր առանձնաշնորհումներուն քան իր սկզբունքներուն, կրնայ կորսնցնել երկուքն ալ”:

